

Չը նախելով նիւթի չարմարութեան և հեղինակի լաւ ծանօթ լինելուն ալն կեանքին, որ նկարագրում է, ինքը վէպիկը, իբրեւ հեղինակութիւն, անկատար է և միայն մասամբ չաջողած:

Գիւլէն սրտոտ քրդուհի է, որ իւր նշանածին կորցնելուց չետու, վճռում է նորա վրէժը առնել նորան սպանողներէց և իսկապէս առնում էլ է, կատարելով համարձակ արշաւանք թշնամիների վրանը և դնդակահարանելով գլխաւոր թշնամուն: Պատմւածքի բարոյականը ալն է՝ թէ մարդիկ պէտք է իրանց պատիւը կարողանան պաշտպանել, չը վախենան և երբեք ստրկաբար չը տանեն վիրաւորանքներ:

Հեղինակը իւր դրածքին առանձին անուն չի տւել. ալ անուանել է նորան «մի արկած քիւրդերի կեանքից»: Անշուտ է մնում ընթերցողի համար թէ ի՞նչ է դա, եղած դէպք, թէ տիպական մի նկարագրութիւն:

Եթէ դա իսկապէս տեղի ունե-

ցած մի անցք է, ալն ժամանակ հեղինակը պէտք է և բոլոր գրածքին տար ճշգրիտ պատմութեան կերպարանք: Եթէ դա՞մի տեսակ ստեղծագործութիւն է, հիմնւած քրդական կեանքի ծանօթութեան վերալ, ալն ժամանակ պէտք է վիպական ձևը լաւ պահպանւած լինէր և վէպի դանազան մասերը համաչափութեան բերած լինէին:

Հեղինակը դժւարացել է օգուտ քաղելու իւր նիւթից. նա իւր տեղեկութիւնները մոցրել է գրածքի զանազան խորշերը ոչ ցանկալի հմտութեամբ և փոխանակ ճոխացնելու պատմածքը՝ բռնաւորել է նորան և դարձրել ծանր ընթերցանելի:

Պատմածքի երկրորդ կէտը, սկսած վեցերորդ գլխից, աւելի չաջող է և կարդացում է համեմատաբար բաւականին հեշտութեամբ, իսկ մի քանի տեսարանները և հաճութեամբ:

Իբրեւ ժողովրդական դիրք՝ նա կարող է ընթերցողներ գտնել:

Քլ.

«ԱԶՕ-ՄԱՐՈՒՆ»։ Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոդովի. 1890 թ.,
փոքրադիր 22 երես. գինն է 3 կոպէկ:

Գրքովի նիւթը հետաքրքրական է, իսկ նորա բովանդակութիւնը ժողովրդական ընթերցանութեան համար նպատակաւոր մար: Դրածքը սակալն կիսակատար է մշակւած և կրում է մի քանի տեղերում թույլ մտածմունքի կնիք իւր վերալ:

Նիւթը առնւած է Ջուլամբերիկցի

ասորիների կեանքից, որոնք չալտնի են իբրեւ քաջ և ազատասէր ժողովուրդ: Այդ ասորիները կայողացել են իրանց լեռներում պահպանել իրանց ժողովրդական իրաւունքները: Այդ ասորիների և թուրքերի մէջ տեղի ունեցած մի մեծ ընդհարումի նկարագրութիւնը կազմում է գրքովի

բովանդակութիւնը, Ընդհարումի մէջ Ազո-Մարուն ասորունհին կատարում է մեծ քաջագործութիւններ:

Դրքովի գլխաւոր պակասութիւնը այն է, որ նա սկզբում խելօք չէ դուրս բերել ասորիներն Վերաբերմունքը գէպի թուրքը: Այդ վերաբերմունքը չը պէտք է ցեղական ատելութեան կնիք կրի: Եթէ այդ տե-

սակ վերաբերմունքը իրականութիւնից է առնւած՝ նա պէտք է կամ գաղափարական հիմունքով բացատրուած լինէր կամ եթէ այդ չը կալ, այն ժամանակ նա՝ իբրեւ ոչ կրթիչ մի հանգամանք՝ պէտք է ամենեւին զործ չը դուրէր ժողովրդական գրքի համար:

ՔԼ.

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ԿՈՍՏԱՆԴԻՆ. - ՌԻԳԼԵՑՈՅՑ ԳՈՐԾԵԱԿԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ. . Թիֆլիզ, տպարան Յ. Մարտիրոսեանցի. 93 երես. գինն է 40 կոպէկ: Հրատար. Թիֆլ. Ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան № 27:

Ուղեցոյցը այն գրքովներէից մէկն է, որոնք այնքան ցանկալի են մեր ժողովրդի համար, Նա տալիս է չերամապահութեան մասին հասկանալի լեզուով խրատներ և ծանօթացնում է մեզ իւր արած երեք տարւալ փորձերի հետ Անդրկովկասի զանազան տեղերում:

Շերամապահութեան մէջ՝ ինչպէս և ուրիշ արդիւնաբերութիւնների մէջ՝ երկու կողմ կալ. մէկը առարկան է և նորա լատիւթիւնը, միւսը՝ ինքը արհեստն է: Հեղինակը շեշտելով զանազանում է այդ երկու կողմը և իւր գրութեան մէջ պահպանում է նոցա համապատասխան քննութիւնը: Այդ պատճառով նա շերամապահութեան արհեստից շինել է առանձին բաժին:

Հեղինակը, սկսելով շերամորդների ձուլի քննութիւնից՝ քալ առ քալ նկարագրում է որդնի մեծանալը, չապիկ փոխելը և նորա կանոնաւոր և

տեկանոն զարգանալու առանձնաւատկութիւնները:

Յալտնի է, որ շերամորդնի հիւանդութիւնները մեծ վնաս տւին շերամապահութեան զարգանալուն և մի քանի տեղ կանգնացրին նորան: Այդ հիւանդութիւնների ուսումնասիրութեան նւիրեցին իրանց շատ պիտոնականներ, որոնց մէջ աչքի է ընկնում հռչակաւոր ֆրանսիացի Պաստեօրը, որ ոչ միայն ուսումնասիրեց հիւանդութիւնների պատճառը, այլ և դատաւ զոցա առաջն առնելու հնարները: Այժմ խելացի և քաջող շերամապահութեան գաղտնիքը մասամբ կալացած է այն ճշդութեան մէջ, որով շերամապահը հետևում է Պաստեօրի աւանդած խրատներին: Պ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅԸ այդ պատճառով ճիշտ է առանձին գլուխներ թէ հիւանդութիւնների նկարագրութեանը և թէ զոցա ճանաչելու ու դո-